


2.10721

11



Կ. ԺՈՒԿՈՎՍԿԻ

# ԳԱՎԱԹԸ

ՊԵՏՏՐԱՏ

30 MAY 2011

891.71.17  
ժ-90

Վ. ԺՈՒԿՈՎՍԿԻ

33953-62  
891.71.17 ժակամբսի  
ժ-90 Զամբար

7485	26.11.04		
413880	28/11/04		

# Գ Ա Վ Ա Թ Ը

Բաղադր ՇԻԼԼԵՐԻՑ

ՆԿԱՐՆԵՐԸ Լ. ԶՈՒՄԱՆԻ



ՊՈՏՏՐԱՑ  
ՀԼԿՔԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԳԱՍՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՑԵՐԵՎԱՆ 1938

25 APR 2013

3361

Պատ. խմբագիր՝ Հ. Հայրապետյան  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գառնապետյան  
Սրբագրել է՝ Ք. Հովակիմյան

БССР  
Цэнтрыяллібратэка  
імя В. І. Леніна  
№ 10995



Պատվարի լիպակը՝ 2 - 4000. Հրատ 4500.  
Պատկեր 170. Տրամ 4000.  
Քուղթ. 62x94 Տպագիր 3/4 մամ.  
Մեկ մ.մ. 918), նշան. Հեղինակ 0,22 մամ.  
Հ. Նձնված է արտադրության 15 փետրվարի 1938 թ.  
Պատրաստված է տպագրության համար 10 մայիսի 1938 թ.

33953-62

Պետրասի I տպարան, Յերևան, Հենինի 65



«Վ՛որ ասպետը, կամ զրահակիրը շարքային  
Բարձրից անդունդն այս կնետվի,  
Ծովն եմ գցում ահա վոսկյա գավաթը իմ,  
Մթին խորքում ով վոր գտնի  
Իմ գավաթը և անվնաս ել յետ դառնա—  
Այդ գավաթը իբրև պարգև նա կստանա:

Այսպես ասաց թագավորն ու բարձր ժայռից,  
Վոր կախված եր ծովի վրա,  
Յերախը բաց միգոտ անդունդն այն փրփրալից  
Նետեց վոսկյա գավաթն իրա:

«Վ՛որ խիզախը կհանդգնի խիզախ գործին,  
Ո՞վ կգտնի գավաթն ու յետ կգա կրկին»:

Սակայն ասպետ, զրահակիր անշարժ կանգնած՝  
Պատասխան չեր տալիս կանչին.

Լուռ նայում են՝ ահեղ ծովին խիստ մոլիզնած,  
Չեն հետևում այն գավաթին:

Յերրորդ անգամ կրկին բարձր գոչեց արքան.  
«Կգտնվի՞ մեկն ընդունակ այդ քաջության»:

Լուռ թյուն ե... հանկարծ շահել մի մանկավիճիկ  
Հեղ, բայց փտան առաջ յեկավ,

Հանեց թիկնոցն ու արձակեց մեջքից գոտին,  
Յե՛վ լուռ դրանք գետին դրավ...  
Ասպետները, տիկնայք անձայն միտք են անում.  
«Ախ, պատանի, ո՞վ ես, տեսնե՞ք, ո՞ւր ես գնում»:

Յե՛վ քայլում ե գեպի ժայռը ջրին կախված,  
Ջրի խորքն ե հայացքն ուղղում,  
Դուրս են վազում ալիքները խորքից փրփրած,  
Վորոտալով վերև մղվում,  
Գալարվում են ալիքները փրփրաբերան,  
Կարծես ամպրոպն ե վորոտում ահեղաձայն:

Յե՛վ փոռնում են ալիքները, սուլում, ծեծկվում  
Ու խուլ թշուղում շեղջին ցրած  
Ջրի նման: Դեպի յերկինք ե բարձրանում  
Ջրի սյունը ճերմակ-փրփրած,  
Յե՛վ անդունդն ե խռովահույզ յեռում խորքից...  
Ծո՞վ ե արդյոք ուզում ժայթքել ծովի միջից:

Մեկ ել հանկարծ, ալեկոծումս սուսով դադար  
Յե՛վ փրփուրից ճերմակահեր  
Մի սև յերախ ահա բացվեց ջրում փարար,  
Յե՛վ ջրերը խմբով ահեղ  
Դեպի դատարկ վորովայնը յետ սլացան,  
Թնդաց խորքում վորոտընդոստ ու գոռ մի ձայն:

Ել գազազած նոր հորձանքի չսպասելով,  
Կանչեց սղան փրկիչ աստծուն,  
Ու ցնցվեցին ներկա մարդիկ սարսուելով—  
Յե՛վ պատանին կորավ ցածում:  
Ահա փակվեց խորհրդավոր յերախն անհուն  
Յե՛վ փոշ մի ուժ ել չի փրկի խիզախ մարդուն:




Լուսթյուն ե... Աղմկում ե խորքը՝ միայն...  
Յեվ փոշ մեկը այն անդունդից,  
Աչք չի կտրում և տրամուխյամբ ասում մի բան.  
«Զրկվեց կտրիճն իրա կյանքից»:  
Հանդարտվում ե խուլ փոռնոցը ջրի տակին  
Սպասում են մարդկանց սրտերը օխրազին:

«Թեկուզ փոսկյա քո պսակն ել գցես այնտեղ,  
Ասես պսակն ով կդարձնի,  
Նա այդպիսով կբաժանի ջանն ել ինձ հետ—  
Ինձ քո ջանը չի շլացնի:  
Այն, ինչ իր մեջ թաղցնում ե անդունդը մունջ,  
Այդ չի պատմի այստեղ փոշ մի կենդանի շունչ:

Շատ նավեր են ալիքները պտտեցրել  
Ու կյանել խոր ընդերքում,  
Ապա մանր տաշեղ դարձրած յետ են թոցրել  
Սև անդունդից այն անպրծում»...  
Բայց լսվում են կրկին ձայներ խորքից այն մուլթ,  
Ասես ամպրոպ լինի ուժեղ ու մոտալուտ:

Յեվ փոռնում են ալիքները, սուլում, ձեծկվում  
Ու խուլ թշշում, շեղջին լցրած  
Ջրի նման... դեպի յերկինք ե բարձրանում  
Ջրի սյունը ճերմակ-փրփրած...  
Յեվ փոռնոցով ցայտեց շիթը խլացուցիչ,  
Արտավիժված սև անդունդի բաց յերախից:

Հանկարծ... մի բան աչքի ընկավ փրփրած խորքից  
Տեսավ ճերմակ ու կենդանի...  
Յեվ յերևաց ձեռքն ու ուսը ալիքներից...  
Պատառում ե կուրծքը ջրի...



Յե՛վ տեսնում եմ—ինչ ցնծություն—ձախ  
ձեռքով նա  
Հող ե տալիս իսկ աջ ձեռքում ավարն իրա:

Յե՛վ շնչում եր տղան ծանր, շնչում յերկար  
Ու վողջունում լույսն արևի...  
«Կենդանի յե»,—ասում եյին բոլորն ուրախ,—  
«Այսպես հրաշք ել չի լինի՛»  
Մութ դագաղից, այն անդնդից ցուրտ ու խոնավ,  
Կյանքն ու հոգին փրկեց չքնաղ տղան խիզախ:

Տղան յերավ, խումբը նրան ընդառաջեց,  
Նա արքայի փոսքերն ընկավ  
Յե՛վ փոսքի տակ փոսկյա գավաթն իսկույն դրեց:  
Թագավորն իր աղջկան  
Հրաման տվեց զինով թասը տալ տղային.  
Այդ պարզևր քաղցր եր այնքան նրա սրտին:

«Կեցցե՛ արքան: Ով ապրում ե յերկրի վրա,  
Թող յերկրային կյանքով հրճվի:  
Սոսկալի յե սև խավարում ստորերկրյա:  
Աստծու առաջ թող խոնարհվի՛»  
Մի հանգսնիր գաղտնիքները բացել անծայր,  
Վոր պահված են մեզնից այնպես իմաստաբար:

Նետի նման յես գլխիվայր սլացա ցած...  
Հանկարծ իմ դեմ հոսանք յերավ:  
Քարի ձեղքից շուրն եր թափվում հեղեղ դարձած,  
Յե՛վ նա ինձ ել վերցրեց տարավ  
Դեպի անդունդն մի շտեմնված թափով անեղ,  
Յե՛վ ծեծում եր, պտտեցնում եր ինձ այնտեղ:

Բայց յես աղոթք այն ժամանակ արի աստծուն  
Յե՛վ նա փրկեց ինձ փորձանքից՝  
Մթի միջում ցցված մի ժայռ տեսա իսկույն  
Յե՛վ բռնեցի ամուր ժայռից:  
Գավաթն այդտեղ կորալիտնից կախ եր ընկել՝  
Ջուրը նրան դեպի անդունդ ել չեր տարել:

Խառնաշփոթ բան կար իմ տակ այնտեղ, ցածրում՝  
Մթնշաղում մուգ-ձիրանի  
Քուն եր մտել ամեն մի բան, լուռ եր խորքում:  
Տեսնում եյի ինչ անճոռնի  
Յե՛վ այլանդակ շարժվում եյին ինչ վոր բաներ,  
Ծովի խորքի անպատմելի հրաշալիքներ:

Տեսնում եյի վոնց են յեռում մթնում այն սև  
Յե՛վ գալարվում, կծիկ կտրած  
Ջրամուրճը, կատվածուկը այնպես տձև,  
Յե՛վ ծովերի սարսափ դարձած  
Միաժանին: Մահ եր սպառնում մոկույն անհագ,  
Ատամահեղ այդ բորենին ծովաբնակ:

Մենակ եյի ճակատագրով իմ անխափան,  
Ս արգիանց աչքից հեռու ընկած,  
Սիրող հոգով հրեշների մեջ այդ դաժան  
Յերկրի խորքում մեկուսացած  
Մարդու խոսքի հնչյուններից ժիր կենդանի  
Այն ընդգետնյա կենդանների հետ սոսկալի:

Դողում եյի յես սարսափից... հանկարծ տեսա  
Հարյուրոտանը յերավ մթնից,  
Ուզեց բռնել-բաց ե արել յերախն անա—  
Յես սոսկումով փախա ժայռից...  
Փրկված եյի... հորձանքը ինձ հանկարծ վերցրեց  
Յե՛վ գազազած ուժեղ թափով վեր թոցրեց»:



Հրաշք թվաց պատմութիւնը թագափորին:  
«Վեոցրու վոսկյա գափաթն անա,  
Բայց նրա հետ կտամ լես քեզ իմ մատանին,  
Վորի մեջը թանկ արմազ կա,  
Յեթե մի նոր հերոսութիւնն դու կատարես,  
Յե՛վ խորքերի գաղտնիքները դու մեզ պատմես»:

Թագափորի դուստրը լսեց սրտով տրտում,  
Ու շիկնելով ասաց նրան.  
«Հերիք հայր իմ, դու խնայիր այդ պատանուն  
Ել ո՞վ կանի արայես մի բան:  
Իսկ թե նորից պիտի փորձես, զրկի՞ր մեկին  
Ասպետներից, և փոչ ջահել մանկլայիկին»:

Ականջ չարեց արբան, նո՞րից զցեց վերից  
Վոսկյա գափաթն անդունդը մու՞թ.  
«Դու կլինես իմ շատ սիրած ասպետներից,  
Թե գափաթը բերես դու շուտ,  
Յե՛վ աղջիկս ել, փոր պաշտպան ե կանգնում անա  
Սոսք եմ տալիս, փոր քո կլինը պիտի գառնա»:

Յե՛վ տղի մեջ անմ... հ կյանքով հոգին վառվում  
Աչքերն են վառ փայլում խիզախ...  
Տեսավ կույսի կարմրում ե ու գունատվում,  
Սղճում ե նա և զգում վախ...  
Յե՛վ պատանին լի բերկրանքով մի չտեսնված,  
Կյանք ու կորուստ փոռնելով. նետվեց նա գած...

Լսեց անդունդն... Ու աղմկեց նորից ուժեղ...  
Փրփրում ե ճերմակ ու չար...  
Կույսը զողզող զիտում ե այն անդունդն անեղ...  
Ախրներն են հոսում վառար...  
Յե՛վ ալիքն ե գալիս գնում վազքով գաժան՝  
Զկա տղան, ու չի լինի նա հավիտյան:





388

3361

ԳԻՆԸ 45 Կ.

В. ЖУКОВСКИЙ  
КУБОК  
ГИЗ АРМ. ССР, ЕРЕВАН

891.415  
J-90